Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 17 ապրիլի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի, Ռ.Պապայանի, քննության առնելով քաղ. Յ. Ավինյանի եւ մյուսների կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղ. Յ.Ավինյանը եւ մյուսները դիմել են ՀՀ սահմանադրական դատարան, վիճարկելով՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7, 8 հոդվածների եւ 18 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը:

Միաժամանակ, դիմումատուները միջնորդում են մինչեւ սահմանադրական դատարանում դատաքննության ավարտը կասեցնել «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի գործողությունը:

Դիմումատուները Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում եւ ՀՀ վճռաբեկ դատարանում փորձել են պաշտպանել իրենց իրավունքները՝ սպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ գտնում են, որ իրենց նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի վերոհիշյալ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Դատական կազմը գտավ, որ դիմումը ենթակա է քննության «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7, 8 հոդվածների մասով, քանի որ այդ օրենքի 8 եւ 18 հոդվածների դրույթները վերջնական դատական ակտով դիմումատուների նկատմամբ չեն կիրառվել («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մաս), իսկ մնացած մասով դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է նաեւ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը, առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղ. Յ.Ավինյանի եւ մյուսների դիմումը՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6, 7, 8 հոդվածների դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության մասով ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

2. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դիմումատուների միջնորդությանն անդրադառնալ մինչեւ սույն գործով որոշման կայացումը:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան